

149

ՔԻՄԻԿՈՍ

ԿՈՒԶԿԱՆ



891.715
7-60

Խ. Ս. Հ. Մ, ԺՈՂՈՎՈՒՐԳՆԵՐԻ ԿՆՆՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
 ՄՈՍԿՎԱ

1926

2011-05

№ 6 ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ ԳՐԱՇԱՐՔ № 6

891.710
Ո-60

Պ. ՈՐԼՈՎԵՑ

П. ОРЛОВЕЦ.
КУЗЬКА - ДОБРОХИМ

На армянск. яз.

Ք Ի Մ Ի Կ Ո Ս

Կ Ո Ի Զ Կ Ա Ն

Թարգմ. ԱՄԵՌԻ




Центральное Издательство Народов Союза С. С. Р.
Москва, Никольская, 10.

ՍԽԶՍ ԺՈՂՈՎՈՒՐԴԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Մ Ո Ս Կ Վ Ա 1926

Կլիշեները տրամադրել է Գ. Ֆ. ՄԻՐԻՄԱՆՈՎԻ հրատարակչությունը.



33267-4




I

Ահա՛ թե ինչ պատահեց:
Քիչ եր մնում, վոր Կուզկան են աշխարհը գնար:
Յեկ պատճառը—հասարակ կիրն եր:
Ինչքա՛ն է հետը խաղացել—և վոչինչ չեր պատահում: Շիշի մեջ
Ինչ վոր քան կար. ենտեղից կրի վրա ածեց—և գլխին փորձանք յե-
կավ:
Բայց փորձանք եմ ասում հա՛: Լավ է վոր Ստեփան Սերգեյևիչը
չուտ վրա հասավ. թե չե՛ Կուզկային կտանեյին գերեզմանատուն:
Եւ Կուզկան չեր լինի:
Են ժամանակ—մնաս ջարձով Կուզկա:
Դե հիմի՛ ամեն ինչ կարգով պատմեմ:
Կուզկան յերկու տարի յե, ինչ քաղաքումս. է ապրում:
Նրա հայրը գյուղացի յեր: Նա մի խրճիթ ուներ ու մի փոքրիկ
տնտեսություն: Ազատ ժամանակը հյուանություն էր անում: վոր
մի քանի կոպեկ փող աշխատի:
Մայրը տանն էր գործ անում,—լվանում, յեփում, անասուն-
անրին մտիկ տալիս:
Կուզկան մեծացավ այդպիսի պայմաններում:

Յերբ ժամանակը հասավ, նրան տվին գյուղական դպրոց, և վորովհետև ուշիմ և ընդունակ յերեսա յեր, առանց դժվարությունների ավարտեց դպրոցը:

Բայց արդեն վերջին ժամանակները նրա ուշքն ու միտքը քաղաքն էր:

Մոսկվայում յեղած յերեսանները շատ հետաքրքիր բաներ էյին պատմում:



Ենտեղի տները, —ասում էյին,—ենքան բա՛րձր են, վոր... մինչև ամպերը... Իսկ կառքերն առանց ձիերի են վազ տալիս փողոցներում, ճրագներն էլ առանց նավթի յեն, մի կոճակ կա, հարկավոր ե հուպ տալ՝ և լույս կլինի: Փողոցներում ամեն տեղ ակումբ, կինո կա: Մի խոսքով՝ ի՞նչ ասես վոր չկա:

Յեգորը Մոսկվայում յերկում եր մտել, և շատ հետաքրքիր բաներ եր պատմում յերկումական աշխատանքների մասին:

Նրանք գյուղացիների յերեսաններին իսկի նման չեն:

Բոլորը բան են հասկանում, թերթ են կարդում, ընդհանուրի ոգուտի մասին են մտածում, ժողով են գնում և զանազան հարցեր վճռում:

Յեվ շատերը թե աշխատում են, թե սովորում:

Ենտեղ յերկրորդ աստիճանի դպրոց էլ կա, բարձրագույն էլ, յերեկոյան դասընթացներ էլ կան:

Գնա՛ վորտեղ սիրտդ ուզի:

Կուզկան յերկար մտածեց և մի որ էլ ասաց հորը.

— Տա՛ր իճն Մոսկվա: Մովորել եմ ուզում. վոր ավարտեմ՝ քեզ էլ ոգուտ կլինի:

Մտածեց, մտածեց Սիմոնը, կնկա հետ խելք խելքի տվին և վորդուն տարան Մոսկվա՝ իր քեռու մոտ:

Եղ ժամանակ Կուզկան տասնըչորս տարեկան էր:

Նրա քեռին աշխատում եր քիմիական գործարանում և լավ էլ ապրում եր:

Կուզկան ապրեց նրա մոտ:

Նա շուտով սովորեց քաղաքին:

Առաջին հերթին ծանթացավ բակի բոլոր յերեսանների հետ:

Նրանցից իմացավ յերկումի մասին:

Լսեց, լսեց՝ դուր յեկավ և ինքն էլ գրվեց յերկում:

Սկսեց հաճախել ակումբը, ընթերցարան, յերկումական թերթեր եր կարդում, զեկուցումներ եր լսում, մի խոսքով՝ յետ չեղ մնում իր ընկերներից:

Նա աշխատանք էլ գտավ:

Գործարանի լաբարատորիայում մի տղա յեր հարկավոր թղթեր տանել—բերելու և ամանները լվանալու համար:

Քեռին իմացավ այդ բանը և առաջարկեց՝ Կուզկային տալ այդ աշխատանքը:

Կուզկային տարան աշխատանքի տեսչի մոտ, վորովհետև որենքով չեղ կարելի անչափահասներին բանեցնել. անհրաժեշտ կարիքի

զեպքում՝ հարկավոր եր անպատճառ թուլտվութիւն վերցնել
աշխատանքի տեսչից:

Բանը հաջող գնաց:

Կուզկան թուլտվութիւն ստացավ և սկսեց աշխատել:

Կուզկային լաբարատորիան շատ դուր յեկավ:

Լաբարատորիան բաղկացած եր մի քանի մեծ, լուսավոր սենյակներէից: Այդ սենյակներում կային յերկար, մարմարի շերտերով ծածկված սեղաններ և ապակյա մեծ պահարաններ՝ դանազան անոթներէի համար:

Ել ի՞նչ ասես, վոր չկար լաբարատորիայում:

Մտակուց շինած ամեն ձևի ամանեղեններ, շիշեր, մետաղե և ապակե խողովակներ, անձանոթ գործիքներ... մի խոսքով՝ կատարյալ զեղասուճն եր, իսկ շիշերի մեջ պահվում էին թթվուտներ, փոշիներ, դանազան հեղուկներ... Ել չես իմանում ինչ:

Յեվ ամեն մի անոթի, ամեն մի ամանի վրա մի թուղթ եր կպցրած՝ ինչ վոր անհասկանալի բառեր...

Առավոտյան մարդիկ էին դալիս, հագնում էին սպիտակ գոգնոցներ ու աշխատում:

Նրանց անվանում էին լաբորանտներ:

Այդ մարդիկ շատ լուրջ էին, ուշադիր, ամեն բան անում էին մեծ զգուշութեամբ՝ ասես թե անոթները նրանց կկծէին:

Յերրորդ սենյակից մի դուռ բացվում եր զեպի մի փոքր սենյակ:

Այդ սենյակում աշխատում եր հասակն առած մի մարդ՝ Ստեփան Սերգեյեւիչը:

II

Կուզկան իմացավ, վոր այդ մարդը հայանի քիմիկոս ե, վոր նա շատ գիտնական ե, և նրան բոլորը հարգում են:

Կուզկան աշխատում եր հենց նրա ձեռքի տակ:

Նրա աշխատանքը՝ ասենք՝ դժվար չեր, բայց համբերութիւն եր հարկավոր:


Նա ամաններն եր լվանում, տեղները դարսում, հարկավոր

յեկած բաներն եր տալիս, սպիրտի ճրագն եր վառում, ջուր եր տաքացնում:

Յեվ ամեն ինչ անում եր Ստեփան Սերգեյեւիչի ասելով:

Ինքը Ստեփան Սերգեյեւիչը բարի մարդ դուրս յեկավ: Կուզկային պատմեցին, վոր նա բանվորի վորդի յե, և առաջ ե գնացել իր աշխատանքով:

Թագավորի ժամանակ նա «քաղաքական» եր, աքսոր ե գնացել, իսկ Հոկտեմբերյան հեղափոխութիւնից հետո կոմունիստական կուսակցութեան մեջ ե մտել և անդադար աշխատում ե մինչև հիմա:



Ստեփան Սերգեյեւիչը Կուզկային սիրում եր:

Դե վո՞նց չսիրեր, Կուզկան խելոք տղա յեր, ուշիմ, աշխատասեր:

Յեվ Կուզկան աշխատում եր:

Սկզբում նա միայն հրամաններն եր կատարում, իսկ հետո ինքն ել ուղում եր իր արածները հասկանալ:

Բայց բան դուրս չեր գալիս, վորովհետև շիշերի գրությունները չէյին կարդացվում:

Մի որ ել մինչև անգամ նեղացավ, և սիրտը լցված՝ գնաց Ստեփան Սերգեյևիչի մոտ:

Իսկ ծերունին ծիծաղում էր.

— Դա, — ասաց նա, — լատիներեն է գրված... ուզում ես՝ քեզ կարդալ սովորեցնեմ:

— Իհարկե ուզում եմ:

Յեվ ի՞նչ: Կես տարվա ընթացքում Կուզկան այնպես սովորեց, վոր սկսեց լատիներեն կարդալ և նույն իսկ դեղերի անունները հիշում էր:

Ստեփան Սերգեյևիչը, պատահում էր, վոր դիտմամբ, քմծիծաղ տալով, ասում էր Կուզկային.

— Ապա՛, Կուզկա, տուր ինձ... ու լատիներեն մի խոսք էր ծեփում:

Իսկ Կուզկան տալիս էր ուզածը անսխալ:

Կուզկան թե աշխատում էր և թե պարապում ինքնակրթությամբ: Յերեկոները գնում էր դպրոց, մի-մի անգամ ել թատրոն էր գնում, կամ ուշի ուշով դիտում լաբորանտների աշխատանքը:

Իսկ դիտելու շատ բան կար:

Մի անգամ Ստեփան Սերգեյևիչը վերցրեց մի մեծ շիշ, բանեց բերանը և սկսեց ածել անոթի մեջ:

Չարմանալին են է, վոր շիշի մեջ բան չի յերևում:

Կուզկայի բերանը բաց մնաց:

Ել համբերությունը հատավ:

— Եդ ի՞նչ բանի յես, Ստեփան Սերգեյևիչ, մի դատարկ ամանից մյուսն ես ածում:

Իսկ ծերունին ասաց:

— Դատարկը վո՞րն է, միջին գազ կա:

III

Յեվ նա մանրամասն պատմեց, թե եդ ինչ գազ է:

Կուզկան դեռ դպրոցի նստարանից դիտեր, վոր ողը բաղկա-

ցաց է գազերից — թթվածնից և բորակածնից, իսկ ածխածինը գազի մասին մոռացել էր:

Հենց այդ գազի մասին սկսեց խոսել Ստեփան Սերգեյևիչը.

— Ողը բաղկացած է յերեք գազերից՝ թթվածնից, բորակածնից և ածխածինը կազմում է ողի մի հինգերորդ մասը, բորակածինը՝ չորս հինգերորդականը, իսկ ածխածինը գազը կազմում է ողի 10,000 մասից 3—4 մասը:

Յեվ նա շիշը մոտեցրեց Կուզկայի քթին:

Ինչ վոր թթու, ծանր հոտ էր գալիս:

— Սա թունավոր գազ է: Յեթե սրա մեջ թողնենք մի կենդանի՝ նա կխեղդվի, — բացատրում էր Ստեփան Սերգեյևիչը, — այս գազը ողից ծանր է, թեև չի տեսնվում, բայց կարելի յե մի ամանից մյուսը ածել ջրի նման: Ինչքան վոր քիչ լինի ածխածինը գազը, այնքան մաքուր կլինի ողը:

Կուզկային հետաքրքրությունը բռնեց.

— Հասա վորտեղ է այդ գազը քիչ լինում:

— Նա գոյանում է շնչառության ժամանակ, վորևե բանի փտելուց կամ այրվելուց: Ով շնչում է՝ նա արտադրում է ածխածինը գազ: Դրա համար ել ողը ծանր է լինում այն սենյակնեքում, վորտեղ մարդիկ շատ կան, — բացատրում էր Ստեփան Սերգեյևիչը, — իսկ անտառում, ընդհակառակը, ողը շատ մաքուր է լինում, վորովհետև բույսերը կլանում են այդ գազը:

Յեվ նա մեծ բավականություն պատճառելով Կուզկային, ցույց տվեց, թե ինչպես է ստացվում այդ գազը:

Նա մի լայնաբերան շիշ վերցրեց, մեջը մի քանի կտոր կավիճ գցեց և փակեց մի խցանով, վորի վրա յերկու ծակեր կային:

Ծակերից մեկում նա մի ապակյա ծագար դրեց, իսկ մյուսով անց կացրեց մի յերկար, կոր խողովակ: Այդ խողովակի ծայրը խրեց ջրի մեջ:


Հետո վերցրեց քայսաթթու (կարելի յե և աղային թթու) և ծագարի միջով ածեց կավիճի վրա, ծագարը հանեց և ծակը պինդ փակեց:

Կուզկան տեսավ, թե ինչպես կավիճից բշտիկներ բարձրացան:

— Դա ածխածին գազն է արտադրվում, — բացատրեց Ստե-

փան Սերգեյեիչը: Սկզբում նա դուրս կվանի շիշի մաքուր ողը, հետո ինքը դուրս կգա խողովակի միջով և կհոսի դեպի ամանը:

Յեվ ճիշտ վոր: Թեև կուզկան չափազանց, թե ինչպես է հոսում գազը, բայց յերբ հոտոտեց անոթը, իսկույն զգաց թթու, ծանր հոտը, իսկ յերբ Ստեփան Սերգեյեիչը ամանի մեջ ընկղմեց վառած լուցկին՝ կրակը անմիջապես հանգավ:



Հենց այդ փորձից հետո սկսվեց պատմութիւնը:
Քիմիան սկսեց սաստիկ հետաքրքրել կուզկային և նա ձեռք բերեց մի քանի տարրական դասագրքեր:

IV

Ի հարկի, քիմիան լավ բան է,—բայց քիչ էր մնացել, վոր հենց եղ քիմիայի յերեսից կուզկան են աշխարհը գնար:

Յեվ այդ տեղի ունեցավ պատահաբար:

Մի անգամ Ստեփան Սերգեյեիչը, սովորականի նման, աշխատում էր լաբարատորիայում, իսկ կուզկան ոգնում էր նրան:

Սեղանի վրա դարսած էին անոթներ և շիշեր, իսկ սեղաններից մեկի վրա մի տասը ֆունտի չափ բորակ կար ածած:

Ստեփան Սերգեյեիչը ինչ վոր բանի համար դուրս յեկավ, պատվիրելով կուզկային՝ սեղանի վրա գտնված շիշերն ու աղաթթուն իրենց տեղերը դարսել:

Դրանից առաջ՝ շուր էին տաքացրել և գոլորշին բռնել եր սենյակը:

Սենյակի դուռը սովորականի նման պինդ փակած էր:

Կուզկան վերցրեց աղաթթուաւի շիշը, և հագիւ մի քանի քայլ եր արել՝ վոր վտար սաթաքեց ու գետին փռվեց, իսկ աղաթթուն թափվեց բորակի վրա:

Սկզբում նա ուշադրութիւն չդարձրեց այդ բանին:

Նա միայն անհանգստացա՝ վոր թափել է թթուն:

— Իմը ինձ կհասնի,—մտածում էր նա:

Առաջին հերթին նա մտածեց հավաքել թաց բորակը և դուրս թափել:

Բայց փոխեց վորոշումը:

— Կչորանա, իսկ յեթե հավաքու եր և նկատվի ու ավելի վատ լինի բանս:

Նա վերցրեց թթուաւի շիշը, վորի կեսը թափվել էր, բերանը պինդ փակեց, դրեց պահարանը և սկսեց ամանները մաքրելով զբաղվել ու չնկատեց, վոր բորակի հետ ինչ վոր բան է կատարվում:

Անցավ մի քանի րոպե:

Յեվ հանկարծ—սկսվեց բանը:

Կուզկան զգաց ինչ վոր տարրինակ, անդուրեկան, քիթը ծակող հոտ:

Սկզբում նա ուշ չդարձրեց:

Նա միայն այն ժամանակ նկատեց, յերբ տեսավ, վոր սենյակում գոլորշին խտանում է, իսկ զարշելի հոտը ավելի սաստկանում:

— Յերևի վորևե շիշ է բացվել,—մտածեց նա,—լինու չի կարող պատահել վոր, ինչ անպիտան բան ասես՝ կա:

Յեվ նա ման էր գալիս, վոր գտնի բացված շիշը:

Իսկ հոտը դառնում էր ավելի ծանր և սարսափելի:

Կուզկան հանկարծ զգաց, վոր խեղդվում է:

Նրա մտքովը չանցկացավ բաց անել պատուհանները և ոգ-
նության կանչել մարդկանց:

Սարսափը բռնեց նրան:

Վախից անզգա դառած՝ նա շարունակում էր պտույտ գալ դես
ու դեն:

Գլուխը տրաքվում էր, շունչը խզվում:

Նա մի անգամ ել դես ու դեն վազեց, և հանկարծ փռվեց հա-
տակին:

Բոլորովին ուշաթափ, կիսախեղդ՝ տարածված էր նա հատա-
կին:

Այդ ժամանակ դուռը բացվեց և սենյակը մտավ Ստեփան
Սերգեյևիչը:

Հենց լավ ժամանակին վրա հասավ:

Թե մի քանի րոպե ուշացել էր՝ կուզեի ել չեք լինի:

Փորձառու քիմիկոսը իսկույն ճանաչեց անդուրեկան հոտը:

— Քլոր է: Վորտեղից լուս ընկավ քլորը,— ճշաց նա:

Լաբարատորիան շտապ աչքի անցնելով՝ նա տեսավ հատակի
վրա փռված յերեխային:

Նա դեռ չիմացած բանը ինչու՞ն է՝ շունչը պահելով՝ առաջ
վազեց, վերցրեց յերեխային և իսկույն տարավ մյուս սենյակը:

Բարձրացավ մի մեծ աղմուկ:

Վազեցին բոլոր լաբորանտները, բանվորները:

Լաբարանտներից մեկը տեսնելով վոր քլոր է՝ շունչը պահելով
ներս վազեց և բաց արավ սենյակի պատուհանները:

Կուզեի այն դուրս տարան բակը և ինչ վոր բան ավին խմելու:

Յեվ միայն այն ժամանակ, յերբ լաբարատորիայի ողը մաքրե-
ցին՝ Ստեփան Սերգեյևիչը կարողացավ հասկանալ, թե ինչու՞ն է բանը՝
տեսնելով թաց բորակը, վորից դեռ բարձրանում էր գարշելի գազը:

V.

Կուզեի մի քանի շաբաթ պառկեց հիվանդանոցում:

Նա նիհարել էր և գույնը գցել, բայց առողջացավ և փրկ-
վեց քլորի թույնից:

Յեվ միայն այն ժամանակ նա հասկացավ իր հիվանդության
պատճառը, յերբ հանդիպեց Ստեփան Սերգեյևիչին:

— Քեզ թունավորեց քլոր գազը,— բացատրեց նրան ծերու-
նին,— այդ թունավոր գազը արտադրվել է այն ժամանակ, յերբ
դու բորակի վրա յես թափել աղաթթուն:

Յեվ ցույց տալով ամուր փակած շիշը՝ նա ավելացրեց.

— Այդ գազը կարելի յե ստանալ նաև կերակրի աղից,
վորի բաղադրության մեջ նա մտնում է մոտ յոթանասուն տոկո-
սով: Այդ գազը ունի դեղին-կանաչավուն գույն, և ներկայումս
անազին նշանակութուն ունի:

Իհարկե, հիմա կուզեի ել իր կաշվի փորձով դիտե, թե ինչ
նշանակութուն կարող է ունենալ այդ անիծված գազը:

— Թե վրա չեյին հասել՝ բանս բուրդ էր,— մտածում էր նա:
Յեվ նրա գլխով մի միտք անցավ.

— Այ թե կարելի լիներ եղ գազով մի լավ կոտորել բոլոր
բոլոճները... բաշխի՞նքները...

Նա հիշեց գյուղի հայրենական խրճիթը, ուր վխտում էյին բո-
լոճները:

— Վորտեղից են եղ անպիտան արարածները

Ի՞նչ ասես չեք անում մայրը:

Ամեն ձմեռ ցրտի տակ սառեցնում էյին, կոտորում, բայց հնար
չկար. ելի բազմանում էյին, մանավանդ բաղլին՝ ները (թախտաբիթի):

Վոչինչ չեք ոգնում: Պատերը տաք ջրով լվանում էյին, մինչե
անգամ՝ թուրքերից աղոթած խոտեր էյին առնում ու դնում,— բան
չեք դուրս գալիս:

Անիծվածները հոգի էյին հանում:

— Այ թե դրանց վրա մարդ գազը բաց թողնի՝ մեկ հատ ել չի
մնա:

Կուզեի այն դուր յեկավ ես միտքը:


— Անպայման մորս կզրեմ,— վճռեց նա:

— Յեվ մի հարմար ժամանակ՝ նա այդ ասաց Ստեփան Սեր-
գեյևիչին:

Կուզեի կարծում էր, վոր ծերունին իր վրա կծիծաղի, բայց
նա չծիծաղեց:

— Ճիշտ է, քլորը սպանում է ամեն տեսակ կենդանի արա-
րած, — պատասխանեց նա, — հաճախ քլորը գործ է ածվում վորևէ բան
հականեխելու համար, որինակ, յերբ հարկավոր է լինում մաքրել
սենյակի ողբ փնասակար բացիլներին: Յերբ տանը վարակիչ հիվանդ
է լինում՝ ոգում, սենյակների և առարկաների վրա մնում են վա-
րակիչ բացիլներ, վորոնք կարող են հիվանդութունը տարածել:

Այդ բացիլները սպանելու համար հականեխում են սենյակը:
Յե՛վ նա պատմեց, թե ինչպես կարելի յե քլորով հականեխել
սենյակը.



— Նախ թղթով փակում են բոլոր ճեղքերը: Հետո տաշտի
մեջ դնում են շիկացած քարեր և վրան ջուր ածում, վոր սենյա-
կում գոլորշի բարձրանա: Հետո ամանի մեջ դնում են բորակը
(խրճիթի համար յերկու կիլոգրամը բավական է) և վրան ածում
աղաթթու (նույնպես յերկու կիլոգրամ), իսկ իրենք հեռանում են
և դուռը պինդ փակում: Բնակարանը թողնում են այդ դրության
մեջ կես կամ մի ամբողջ օր:

— Անպայման կգրեմ, նորից վորոշեց կուզկան:

Յե՛վ իսկապես՝ գրեց:

Այդ ժամանակ պատահեց մի ուրիշ դեպք: Հանրապետության
մեջ կազմվեց «Դորբոխիմ» անունով ընկերութուն:

Ընկեր Տրոցկու կոչը կայծակի արագությամբ տարածվում էր
հսկա հանրապետության բոլոր մասերը և տեղ գտնում բոլորի սըր-
տերում:

Քաղաքներում և գյուղերում սկսեցին կազմակերպվել այդ ըն-
կերության բջիջներ, ամեն տեղից սկսվեցին նվիրատվութուններ
ստացվել:

Դորբոխիմի մասին սկսեցին խոսել ժողովներում, հողվածներ
եյին տպագրվում ժուրնալներում և թերթերում:

Կուզկան մեծ բավականությամբ լսեց մի յերկոմական ճառա-
խոսի, վոր հիանալի ճառ ասեց ակումբում:

— Անցած պատերազմի դասերը իզուր չպիտի անց կենան:
Դեռ մինչև այդ պատերազմը՝ վոչ վոք առանձին ուշադրութուն
չեր դարձնում քիմիական պատերազմին, — ասում էր ճառախոսը, —
այն ինչ՝ քիմիան պատերազմի ընթացքում մեծ դեր խաղաց. նրա
շնորհիվ քիչ էր մնում, վոր Գերմանիան հաղթեր իր բոլոր հակառա-
կորդներին, և կհաղթեր, յեթե նրա հակառակորդները նույնպես
չընդորինակեյին գազերի գործածութունը: Նրանք էլ սովորեցին
թունավոր գազեր բաց թողնել, և գերմանացիների հարձակումնե-
րին պատասխանում էյին նույնպիսի հարձակումով, այսինքն՝ գա-
զերով: Ժամանակը ամեն ինչ փոխում է: Առաջ վոչ վոք չեր հա-
վատում, վոր կարող է ողային լուրջ կռիվ տեղի ունենալ, իսկ հի-
մա արդեն վխտում են ոգանավերը և շուտով, յերևի, ծովային նա-
վատորմիղը էլ բանի տեղ անց չի կենա:

— Ճիշտ է, — նկատեց կուզկան:

— Մինչև այժմ պատերազմի համար թնդանոթներ էյին հար-
կավոր, — շարունակեց ճառախոսը, — բայց թնդանոթները այլևս ան-
գոր են բետոնի շենքերը քանդելու, և մարդիկ հնարեցին թունավոր
գազեր: Այնտեղ, վորտեղ թնդանոթի ուումբը չի կարողանում
թափանցել, թափանցում է գազը: Այդ գազերը փոփելով յերկրի
յերեսին, մտնում են բոլոր խրամատները՝ ինչքան էլ նրանք խորը
լինեն: Պատերազմի նախկին միջոցները հնանում են, առաջ է
տարվում նոր, քիմիական պատերազմ:

Յե՛վ մենք, ազատ Ռուսաստանի քաղաքացիներս պետք է պատ-
րաստ լինենք այդ որվա համար:

Վոչ թե նրա համար է, վոր մենք հարձակվենք, վորևէ յերկիր գրավենք,—վոչ, մենք այդպիսի նպատակներ չունենք, բայց մենք ունենք անհաշիվ թշնամիներ: Մեր ամենավոխերիմ թշնամին — համաշխարհային կապիտալն է: Բոլոր յերկրների կապիտալիստները սաստիկ ատում են մեր յերիտասարդ, սոցիալիստական հանրապետութիւնը, և շարունակ հարմար առիթ են վորոնում, վոր խեղդեն մեր աշխատավոր ժողովուրդը:

— Եղպե՛ս է, եղպե՛ս է,—մտածում եր կուղկան, լսելով ճառախոսին:

Իսկ վերջինս խոսում եր ու խոսում:

— Մենք չենք ցանկանում հարձակվել, վորովհետև մենք թրշնամի յենք պատերազմին, բայց մենք պարտավոր ենք պաշտպանվել՝ յերբ ընկնում են մեզ վրա: Յե՛վ մենք այդ պետք է անենք վոչ միայն մեզ համար: Մենք այդ պետք է անենք վոչ միայն մեզ, այլ և ամբողջ մարդկութեան համար: Մենք՝ առաջապահ գունդն ենք կազմում համաշխարհային հեղափոխութեան: Մենք չենք թույլ տա, վոր կապիտալիստները վոչնչացնեն այն, ինչ վոր մենք ձեռք ենք բերել մեր արյան գնով: Մենք չենք թողնի, վոր կորչի ժողովրդի ազատութիւնը: Իսկ դրա համար անհրաժեշտ է, վոր մենք պատրաստ լինենք կռվի դուրս գալու: Բայց վորովհետև կռվի նախկին միջոցները հնանում են, մենք պետք է պատրաստվենք նոր, քիմիական պատերազմին նոր միջոցներով դիմավորելու: Յե՛վ մենք պատրաստ կլինենք:

«Դորբոխիմը» — դա ժողովրդկան կազմակերպութիւնն է: Ամեն մի գիտակից քաղաքացի իր ուժերի չափով պետք է մասնակցի այդ կամավոր գործին:

Ճառախոսը մի փոքր ընդմիջումից հետո շարունակեց.

— Բայց Դորբոխիմ ընկերութիւնն ունի նաև ուրիշ խաղաղ նպատակներ: Դուք բոլորդ գիտեք, թե ինչպես հարավում մեր ցանքսերը վոչնչացնում են դաշտային մկները, զանազան միջատները և վերջապես մորեխը: Մեր Դորբոխիմը դուրս կգա մեր վոչ միայն մարդ թշնամիների դեմ, այլև կկռվի այն համաձարակների դեմ, վորոնք փչացնում են մեր ընդարձակ հունձքը, դաշտերը: Նա կկռվի նույնպես հիվանդութիւնները տարածող բացիլների դեմ, նա



332674



մեծ ոգնութիւնն ցույց կտա մեր հողագործին՝ հողը արհեստական կերպով պարարտացնելու, վորպեսզի բերքը լավ լինի:

Ամենքդ գրվեցեք Դոբրոխիմի անդամ: Կեցցե՛ մեր նոր ընկերութիւնը:

Ծափահարութիւնները գղրդացին:

— Յերկրի քիմիական ինքնապաշտպանութեան և նրա խաղաղ քիմիական արդյունաբերութեան միջև խոշոր կապ կա: Ինքնապաշտպանութեան պատրաստ լինելու համար՝ հարկավոր է զարգացնել խաղաղ քիմիական արդյունաբերութիւնը:

Այդ խոսքերքով՝ ճառախոսը վերջացրեց իր զեկուցումը:

Յերիտասարդները դեռ յերկար ժամանակ հուզված էին: Խոսմբ - խոսմբ վիճում էին, քննում՝ թե ինչպես լավ կլինի սկսել գործը:

Իսկ Կուզկան նորից հիշեց հայրենական խրճիթի բոլոճներն ու բաղլինջները:

Դրանք ել ներքին թշնամիներ են, վորոնք տանը հանգիստ չեն տալիս վոչ վորքի:

VI

Ա.—պըչի՛:

Կուզկան ենպես փոշտաց, վոր սեղանի անոթները սկսեցին զողանջել:

— Ա.—պըչի՛, —պատասխանեց Ստեփան Սերգեյևիչը մյուս կողմից:

— Վա՛յ յես... —սկսեց Կուզկան, բայց շարունակել չկարողացավ:

— Ա.—պըչի՛:

— Ա.—պըչի՛, —ձեն տվեց Ստեփան Սերգեյևիչը:

Կուզկան բերանը բաց արավ, վոր բան ասի, բայց ելի խոսքը կիսատ մնաց, —քթածակերը քերվում էին:

— Ա.—պըչի՛, պըչի՛, —ա—պըչի՛, —սկսեց փոշտալ նա իրար վրա:

— Ա.—պըչի՛... ա՛ — ա՛ — պըչի՛, — վրա յեր բերում Ստեփան Սերգեյևիչը:

Կուզկան ելի փորձեց խոսել, բայց հենց վոր բաց եր անում բերանը՝ սկսում եր գծի պես փոշտալ:

— Ա.—պըչի՛, ա—պըչի՛, ա—պըչի՛:

— Վա՛յ յես... Ա.—պըչի՛: Ես ինչ... պըչի՛, ա—պըչի՛: Ել սրա ձեռիցը... պըչի՛, պըճնել... ա—պըչի՛, պըչի՛:

— Ա.—պըչի՛... Բաց ա՛րա... ա—պըչի՛... պատուհանները... —ծիծաղելով և փոշտալով ասաց ծերունին:

Կուզկան իր որում այս տեսակ չեք փոշտացել: Փոշտալով և քիթը տրորելով նա բացեց բոլոր պատուհանները:

— Թ՛յո՛ւ, սատանի բերած: Հաղիվ սրտներս տեղն ընկավ:

Կուզկան ակնապիշ նայում եր ծերունուն:

— Հը՛, կշտացա՛ր փոշտալուց, —ասաց ծերունին ծիծաղելով:

— Լավ վոր քիթս պոկ չեկավ: Վո՛րտեղից բռնեց ե՛, —փնփնթաց Կուզկան, —չլինի՞ թե ելի շիշ ե բացվել:

Ստեփան Սերգեյևիչը նորից ծիծաղեց:

— Դուշակեցի՛ր, Կուզկա, գուշակեցի՛ր, —ասաց նա, ցույց տալով մի մեծ ապակյա անոթ, վորը թվում եր թե դատարկ է:

Բայց Կուզկան արդեն սովորել եր լաբարատորիայի գարմանալիքներին և վախում եր դատարկ շշերից:

— Հենց եղպես ել կլինի, յերևի մի ինչ՝ վոր անիծած գազ է դուրս ընկել:

— Դու հիմա քեզ վրա փորձեցի՛ր մեկը այն գազերից, վորոնք փոշտացնում են, —պատասխանեց Ստեփան Սերգեյևիչը. —այդ գազերը կոչվում են արսիններ կամ փոշտացնող գազեր, վորոնք գրգռում են քթի լորձնային թաղանթը: Յեթե մարդ ընկնի այդպիսի գազերի մթնոլորտում՝ նա կսկսի այնպես կատաղի փոշտալ, վոր կթուլանա և չի կարողանալ վոչինչ անել: Գերմանացիները այդ գազերը գործածում էին պատերազմի ժամանակ: Յերբ արսինների ամպը տարածվում եր հակառակորդ բանակի վրա՝ ամբողջ զորագնդեր սկսում էին սոսկալի փոշտալ, և թշնամին ոգտվելով նրանց իրարանցումից, սկսում եր իր հարձակումը:

Կուզկան իսկույն յերևակայեց, թե ինչպես կլինեք:

Բանակը մտել է խրամատները:

Յեվ հանկարծ բոլորը սկսում են փոշտալ:

Փոշտում են զինվորները, փոշտում են սպաները...

Իսկ գերմանացիները անցնում են հարձակման:

Բանակը փոշտում ե հա փոշտում: Զինվորները փոշտում են արտասվելու աստիճան, ուղղակի ուշաթափ են լինում, և փոխանակ համազարկի՝ թշնամուն հանդիպում են սոսկալի փոշտոցով:

Յեւ Կուզկան լուրջ հետաքրքրվեց:

— Իսկ շատ են այդ տեսակ գազերը...—հարցրեց նա:

— Շատ են, շատ,—պատասխանեց Ստեփան Սերգեյևիչը,— և յեթե դու հետաքրքրվում ես՝ յես կարող եմ քեզ վորոշ բաներ բացատրել:

— Շատ եմ ուզում:

— Գազային պատերազմի ամբողջ նպատակն է՝ ինչքան հնարավոր ե վոչնչացնել հակառակորդի զորաշարքերը,—խոսեց Ստեփան Սերգեյևիչը,— և այդ նպատակով պատրաստում են պատերազմական զանազան գազեր: Այդ գազերը պահվում են մետաղյա ամուր փակված անոթների մեջ:

Նախ քան այդ գազերը բաց թողնելը, անոթները կարգով դարսում են մի գծի վրա:

Հետո սպասում են, մինչև քամին փչի դեպի հակառակորդի կողմը, այն ժամանակ անոթները բաց են անում և դուրս ե վիժում գազը:

Այդ գազերը ողից ծանր լինելով ցածրում են կանգնած մնում:

Բամին փչում ե այդ գազի ամպերը դեպի հակառակորդը, վորի բանակում սկսվում ե կոտորածը:

Ստեփան Սերգեյևիչը վառեց ծխախոտը և շարունակեց.

— Պատերազմական գազերը լինում են զանազան տեսակի... Կան գազեր, վորոնք պարունակում են ուժեղ թույն. դրանք խեղդում են մարդուն անմիջապես: Կան ուրիշ այնպիսի գազեր, վորոնք այրում կամ քայքայում են մարդկանց թոքերը, դրանք նույնպես մահացու յեն: Իսկ քլորը դու արդեն փորձեցիր քո սեփական կաշվի վրա:

— Վոնց չե,—տնքաց Կուզկան:

— Կան ելի ուրիշ գազեր,—շարունակեց Ստեփան Սերգեյևիչը, վորոնք աչքերից այնպես են արցունք բերում, վոր մարդ քոռանում ե, իսկ արսենինը մարդու փոշտացնում ե այնպես, ինչպես դու եյիր փոշտում քիչ առաջ:

Ստեփան Սերգեյևիչը պատուհանից վերցրեց կանաչ-դեղնավուն գույնի մի շիշ:

— Սա մաքուր քլոր ե,—ասաց նա,—յեթե մենք այս գազը անց կացնենք մի քանի փորձանոթներով, նա կգոյացնի մի սպիտակ ամպ: Յեթե այդ գազին ավելացնենք քլորական անագ, այն ժամանակ ամպը կսևանա, կմթնի այնպես, վոր նրա միջով ել չի լինի բան տեսնել:

Կուզկան ուշադրությամբ լսում եր պատմությունը:

— Իսկ այդ քլորից շատ ե հարկավոր պատերազմի ժամանակ,—հարցրեց նա:

— Շատ,—պատասխանեց Ստեփան Սերգեյևիչը,—մի ֆրանսացի գերմանացիների վրա գազային հարձակում՝ կատարելիս՝ ութ կիլոմետր գծի վրա դրեց 6,000 անոթ, ուրիշ խոսքով՝ 240,000 կիլոգրամ քլոր:

Ստեփան Սերգեյևիչը տարվեց խոսակցությամբ:

Նա սկսեց խոսել ապագա պատերազմի մասին, այն մասին, թե ինչպես գազերով կարելի յե բնաջինջ անել ահագին տարածություններ, այն մասին, թե ինչպես գազերից պատրաստում են սարսափելի ուժեր:

Կուզկայի սիրտը ճմլվեց:

— Ողային և քիմիական պատերազմը մոտ ապագայի հարց ե,—ասում եր ծերունի քիմիկոսը,—բայց այդ պատերազմում մեծ տեղ ունի նաև ֆիզիկան: Մարդիկ արդեն ոգտվում են ելեքտրական ուժեղ հոսանքներով: Ո՞վ ե իմանում, մոտ ժամանակներում գուցե հնարեն այնպիսի հոսանքներ, վորոնք կարող կլինեն շուռ տալ գնացքներն ու ցած բերել ողանավերը:

Նա մի բուպե լռեց, և ապա շարունակեց.

— Յես մոտ որերս տեսա մի յերկաթագծի ինքնուս բանավոր, վորը սկիզբ դրեց մի նշանավոր գյուտի: Նա գտավ ջերմության ճառագայթները խտացնելու հնարավորությունը: Ճիշտ ե, նրա գյուտը դեռ լայն գործածություն չի գտել, բայց... սկիզբը դրված ե, և ապագայում այդ խնդրով կգրադվեն շատ գիտնականներ:

— Եդ ինչ ճառագայթների խտացում ե,—հարցրեց Կուզկան:

— Զերմության ճառագայթները նրա ապարատից անց կենալով, — բացատրում եր քիմիկոսը, — իրենց ճանապարհին արձակում են ուժեղ տաքութիւն: Մի խոսքով՝ նրա ճառագայթները վորոշ տարածության վրա տալիս են ջերմության վորոշ աստիճան: Թե ինչպէս է կառուցված նրա ապարատը՝ դեռ վոչ վոք չի իմանում: Նա իմ ներկայութեամբ փորձեր արեց, և ասում եր, վոր իբր թե գտել է մի նոր հանք: Գործի մեջ դնելով իր ապարատը, նա յերեք արշին տարածութեան վրա հալեց կարծր մետաղներ:

Կուզեցի հիասթափվեց.

— Միայն այդք՞ան:

— Այդ ել մեծ բան է, — բացականչեց Սեփան Սերգեյեւիչը, — հարկավոր է միայն գյուտը մշակել: Նրա ապարատը աշխատում է հարյուրհիսուն վոյլտ հոսանքով, իսկ ինչ կարող է լինել՝ յեթե բաց թողնվի հինգ հազար վոյլտ... մի՞թե չի կարելի սպասել, վոր այդ դեպքում հնարավոր կլինի 7—10 միլ տարածութեան վրա հաղորդել յերկու հազար աստիճան ջերմութիւն:

Ծերունի գիտնականի աչքերը փայլեցին:

Նա շղային ցնցումով վեր թռավ տեղից, մի ձեռքը գործիքի վրա դնելով, մյուս ձեռքը մեկնելով, ասես թե ցույց եր տալիս թռչող մի ողանավ:

— Տե՛ս: Յենթադրենք թե յես ձեռքիս տակ ունեմ այդպիսի մի ապարատ: Լծակի մի շարժումով յես բաց յեմ թողնում ջերմութեան այդ անավոր ճառագայթը, ամբողջ տարածութիւնը կլինի իմ իշխանութեան ներքո: Ճառագայթը, վոր ունի ջերմութեան յերկու հազար աստիճան՝ իր ճանապարհին կայրի, կհալի ամեն ինչ:

Նրա ձեռքը ավելի յեր բարձրանում:

— Դիցուք թե՛ թռչում է թշնամու ողանավը, վորը մեր թիկունքն է բերում ումբեր և թունավոր գազեր... Յես կուզեմ իմ ապարատն և կուղարկեմ ճառագայթը: Կանեմ այնպէս, վոր ճառագայթը ընկնի ողանավի վրա: Ընկավ թե չե՛ տեղի կունենա բենզինի անուրի պայթիւն... և թշնամու ողանավը վայր կընկնի — ջարդ ու փշուր:

Ստեփան Սերգեյեւիչը շղայնութեամբ ձեռքը մեկնեց այլ ուղղութեամբ:

— Այ, դիցուք թե ծովով գալիս է մի վիթխարի զրահանավ: Նրա վրա չեն աղղում վոչ ումբը, վոչ թնդանոթը: Կնոց: Յես կուզեմ նրա վրա իմ ճառագայթը: Մի րոպեյում ճառագայթը կծակի նրա անուրի, յերկայթյա կողերը: Զուրը ներս կխուժի զրահանավը: Իսկ յեթե ճառագայթը ընկավ ումբերի և վառողի պահեստը՝ վիթխարի նավը ցաք ու ցրիվ կլինի: Յեթե նա կպչի թնդանոթին՝ զենքը կդառնա կարմիր հեղուկ: Իմ ճառագայթը իշխում է ծովի ամբողջ յեզերքը՝ յերկնքից մինչև գետին:

Նա լռեց, և ասես թե հոգնած՝ ընկավ աթոռի վրա:

— Դե իհարկե, յես շատ տարվեցի: Դեռ մենք չունենք այդ հնարավորութիւնը: Իսկ առայժմ մենք պետք է հնարենք մի այնպիսի դազ, վոր կարողանա վոչնչացնել ամեն տեսակի թունավոր գազերի ազդեցութիւնը:

— Չե՛, եդ հերիք չի, մենք պետք է հնարենք մի այնպիսի դազ, վոր վոչնչացնի ամեն ինչ իր ճանապարհին:

Ստեփան Սերգեյեւիչը ուսերը թոթվեց.

— Մի՞թե դու մոռացար, վոր մեր նպատակը հարձակվելը չէ, իսկ ինքնապաշտպանութեան համար պիտի անել այնպիսի բան, վոր թշնամին անգոր լինի մեզ վնասել:

Յեւ թափահարելով ձեռները, նա սկսեց աշխատել:

Ամբողջ ուրը Կուզեցի մտազբաղ եր:

Իրիկնադեմին նրա մեջ մի միտք հղացավ:

Դիմելով Ստեփան Սերգեյեւիչին, նա խնդրեց.

— Ստեփան Սերգեյեւիչ, տո՛ւր ինձ մի քիչ իպրիտ և արսին:

— Ի՞նչ էս անում, — զարմացավ ծերունին:

— Ուզում եմ տղաներին ցույց տալ, — խոստովանեց Կուզեցի:

— Միայն զգո՛ւշ, չթողնես շատ հոտ քաշես: Ասենք՝ այդ գազերը այնպէս վտանգավոր չեն: — Յեւ քիմիկոսը համաձայնվեց տալ այդ գազերը:

Կուզեցի ստացավ գազերի յերկու սրվակը:

VII

Շատ զվարճալի յեր:

Կուզեցի սկզբում գաղտնիքը բաց չարեց:

Նա հրավիրեց իր ընկերներին մեկի մոտ և ինքն ել գնաց իր սրվակներով:

Նրա սրվակներին վոչ վոք ուշք չգարձրեց:

Թվում եր թե նրանք դատարկ էյին:

Յերբ ընկերները հավաքվեցին, Կուզկան հայտնեց, վոր շատ կարևոր բան ունի ասելու, և պինդ փակեց սենյակի դուռն ու պատուհանները: Հետո բացեց սրվակներից մեկի բերանը և դրեց իր կողքին:

— Հը, ի՞նչ ես ասելու,— հետաքրքրվեց Նիկիտը:

— Ա-պտչի՛,— փոշտաց Վանյան հանկարծ:

— Առողջու... Ա-պտչի՛,— փոշտաց ինքը Նիկիտը, թողնելով խոսքը կիսատ:

Պետիկը բերանը բաց եր արել վոր խոսի, բայց սարսափելի փոշտոցը բռնեց.

— Ա-պտչի՛, պտչի՛, ա—պտչի՛:

— Պաչի՛, ա—պտչի՛: Յեվ սկսվեց ընդհանուր խուճապը:

— Վա՛յ, ես ի՞նչ... պտչի՛, պատահեց... ա՛ ա՛—պտչի՛:

— Դե լավ, հերիք ե,— մըթմըթաց Պետիկը, կարծելով թե ընկերները կատակ են անում:

Բայց ինքն ել սկսեց փոշտալ:

Բոլորն ել ենպես էյին փոշտում, վոր հարևանը վախեցած ներս վազեց.

— Գժվե՞լ եք, ինչ ե:

Յեվ ինքն ել հանկարծ փոշտաց:

Ներս մտնելիս, նա դուռը բաց եր թողել:

Յեվ սղանները մի կուշտ փոշտալուց հետո՝ հանգստացան:

Հարևանը գնաց:

Իսկ Կուզկան արդեն պատրաստել եր մյուս սրվակը և դրել կողքին:


— Ա՛յ լավ փոշտալ եր, յերբեք այսպես չեյի փոշտացել,— գարմացավ Նիկիտը:

— Լավ, ինչի՞ յես լաց լինում,— հանկարծ հարցրեց Կուզկան: Նիկիտը ապուշ կարեց:

Նա զգաց, վոր աչքերը տարրորինակ կերպով քոր են գալիս և արտասուք ե ծորում:

— Վոչի՛նչ չեմ հասկանում: Սպասի՛, դու յե՞լ, Վանյա, Կուզկա, դու յե՞լ յես լաց լինում:

Յեվ իսկապես Վանյայի և Կուզկայի աչքերը լիքն էյին արտասուքով:



— Ես ի՞նչ կախարդական բան ե: Իմ աչքերը յերբեք այսպես չեյին մոմուացել, ասես թե սոխ են կտրտում:

Կուզկան վերջացրեց իր փորձերը:

Նա փակեց սրվակը, բաց արավ դուռը և մի քանի բոպե անց՝ սկսեց ծիծաղելով պատմել ընկերներին, թե բանը ինչու՞մն ե:

Պետիկը դժգոհեց.

— Բիմիկո՛ս գլուխդ մեռնի, մարդ կարող ե քո ձեռիցը քո ունալ,— և սկսեց հայհոյել:

Յեվ նորից կրկնեց.

— Ա՛յ գլուխդ մեռնի, Կուզկա քիմիկոս:

Դրանից հետո Կուզկային կպավ այդ անունը

Շատերը նույնիսկ մոռացան նրա իսկական անունը:
Հենց այդպես էլ անվանում էյին նրան.
— Տղե՛րք, քիմիկոսն է գալիս: Բարե՛, քիմիկոս:
Յե՛վ Կուզկան այնքան սովորեց այդ անվան, Վոր ինքն էլ մո-
ռացավ իր իսկական անունը:

VIII.

Մի անգամ, յերբ Կուզկան լաբարատորիա յեկավ, Ստեփան
Սերգեյեիչը նրան առաջարկեց.

— Ուզո՞ւմ ես գնալ հարավ-Վոլգայի շրջանը:

— Ի՞նչո՞ւ:

— Յես մեկնում եմ Դորբոխիմի գորասյունի հետ՝ վոչնչա-
ցնելու համար դաշտային մկներն ու մորեխները, վորոնք սոսկալի
ֆասում են հունձքին, — բացատրեց քիմիկոսը, — և յեթե ցանկա-
նում ես՝ քեզ էլ հետս կվերցնեմ:

Կուզկան ուրախությունից պար եր գալիս:

Ստեփան Սերգեյեիչը միայն ժպտաց:

Իսկ Կուզկան շարունակ մտածում եր այն մասին, թե ինչպես
պիտի գնան և վոչնչացնեն գյուղացու թշնամիներին:

— Տես ի՞նչ կանենք, — պարծենում եր նա իր ընկերներին
առաջ:

Նրա ուրախությանը և հուզմունքին չափ չկար, յերբ գորա-
սյունը նստեց գնացքը և մեկնեց Մոսկվայից:

Յերեք օրից նրանք Սարատով հասան:

Գյուղերում, յեկվորներին գյուղացիները հանդիպում էյին
սաստիկ հուսահատված:

— Ե՛, դատարկ բան ե... ես մկներին ձեռիցը պրծնել չի լինի,
— գանգատվում էյին գյուղացիները, — վիճնց կարելի է դրանց բո-
լորին կոտորել: Են ինչ պիտի լինի, վոր դրանց հաղթի: Ինչքան
ասես՝ կոտորում ենք՝ էլի շատանում են:

Բայց և այնպես նրանք հետաքրքրվում էյին, թե ի՞նչ են
անելու քաղաքից եկածները:

Յե՛վ յերբ գորասյունը սրվակներին ու գազերի բեռներով դուրս
յեկավ դաշտը՝ հարևան գյուղերը դուրս թափվեցին թամաշա:

Գյուղացիները այդ մասին էյին խոսում.

— Ասում են՝ ողով պիտի խեղդեն եդ մկներին... փի՛ե.

— Ի՞նչ ես ասում՝ ողով, գոլորշի՛ պիտի բաց թողնեն, — մեջ
էյին մտնում մյուսները:

— Չե՛, նավթ են ածելու բները:

Ամեն մեկը խելքին գոռ եր տալիս:

Ահա գազի անոթները դարսեցին գծի վրա:

Ուժեղ տպավորություն թողնելու համար, Ստեփան Սերգեյեիչը
պատրաստեց մթնեցնող մի գազ:

Հրամանը տվեց:

Գլորը դուրս վիժեց անոթներից և քիչ քիչ սկսեց կազմել մի
թավ ամպ:

Ամպը ավելի ու ավելի խտանում եր ու անցնում յերկրի յե-
րեսով:

Գյուղացիները զարմացած դիտում էյին տարորինակ ամպը:

— Գոլորշի յա, ե՛լի, — պնդեց մեկը:

— Ամպ են բաց թողնում, — հաստատում էյին մյուսները:

Մի կին սկսեց ճչալ՝ չգիտես ինչի համար:

Իսկ դաշտում մկների մեջ սկսվեց մի իսկական կոտորած:

Սոսկալի գազը ծորալով, լեցնում եր յերկրի բոլոր ճեղքերն ու
անցքերը:

Սարսափահար մկները խուճապով մի բնից մյուսն էյին վազ
տալիս և ընկնում խեղդամահ:

Գազի ճանապարհին խոտերն ու բույսերը դեղնում, կախ էյին
ընկնում:

Կուզկան կանգնել եր անոթներից մեկի մոտ և ուղղություն
տալիս գազի հոսանքին:


Նրա գլուխը ծածկված եր ընդիմադիր դիմակով, վոր չլինի
թե բան պատահի:

Բայց ամպը շարունակում եր հոսել դաշտով:

Ստեփան Սերգեյեիչը հրավրեց գյուղացիներին իր հետ գնալ
և դիտել անցած ճանապարհը:

Չարմանքի և ուրախության ճիչեր էյին արձակում ամենքը:


— Տեսե՛ք, տեսե՛ք: Եստե՛ղ մտիկ: Մի տե՛ս ե: Տղե՛րք, ես ինչ
հրաշք ե: Ուղղակի՛ հրաշք, — բացականչում էյին ամեն կողմից:



Իսկապես՝ զարմանալու բան է:

Սասկած մկները փովել էյին աշնան տերևների նման:

Մկների դիակներին համար չկար:



Գյուղացիներից վոչ մեկը չեր սպասում այդպիսի բան:

Այժմ բոլորը թափվել էյին քիմիկոսների գլխին և զանազան հարցեր էյին տալիս:

Հենց եստեղ ել մեր քիմիկոս Կուզկայի լեզուն բացվեց. նա բլբլուկ եր զարձեղ:

— Եղ մի ընկերություն է, Դորբոխիմ են ասում,—բացատրում եր նա:

— Դուք պետք է թև տաք եղ ընկերությանը, վոր ձեր արտերը փրկվեն:

— Դարձե՞ք եղ ընկերության անդամ, ով ինչքան կարող է, թող տա, ինչ վոր տաք Դորբոխիմին՝ ձեր ջերը դրած կլինեք:

— Դրո՛ւստ ա: Բանը հայտնի յա, ելի: Հանաք չիմանաք, ես

մեծ գործ ա, — վրա եյին բերում գյուղացիները, — մի տեսե՛ք ե, վոնց են սատկոտել եզ անպիտանները...

Յեւ նրանք ցրվեցին իրենց տները՝ խիստ վողկորված:

Մի քանի որ անց, յերբ զորասյունը Սարատով վերադարձավ, գավառից Ստեփան Սերգեյեւիչի մոտ յեկան շատ գյուղացիներ, վորոնք նույնպես տեսել եյին Դորրոխիմի ոգուտը:



Նրանց գյուղական խորհուրդը վորոշել ե Դորրոխիմին շնորհակալութիւն հայտնել՝ նրա ցույց տված ոգնութեան առթիւ: Վորոշել ե նաև հոգուտ Դորրոխիմի հիսուն դեսյատին գարի ցանել:

— Ա՛յ, հիմի ինչ կանենք: Դորրոխիմը վոնց առաջ կգնա, — ուրախանում եր Կուզկան:

Բայց պակաս չեյին ուրախացել նույնպես Ստեփան Սերգեյեւիչը ու զորասյունի մյուս անդամները:

— Մինչև վոր հեղափոխութեան արտաքին թշնամիների հետ կռիվը կսկսվի՝ մենք առայժմ կվոնչնացնենք մեր ներքին թշնամիներին, — ասում եր Կուզկան:

Անցավ վեց ամիս:

Քիմիկոս Կուզկան արդեն վաղուց վերադարձել եր Մոսկվա և աշխատում եր լաբարատորիայում:

Դորրոխիմը զարգանում եր որեցոր:

Ընկերութեան կազմակերպութիւնը լայն ընդունելութիւն եր գտել Միութեան աշխատավոր մասսաների մեջ:

Հանրապետութեան բոլոր մասերում արագութեամբ կազմակերպվում եյին Դորրոխիմի բշխներ և մասնաճյուղեր:

Մի անգամ Ստեփան Սերգեյեւիչը փորձեր եր անում՝ քլորին խառնելով եֆիր և ուրիշ գազեր:

Նա ստանում եր այնպիսի թունավոր գազեր, վորոնք կարող եյին վոնչնացնել հսկա տարածութեան վրա ամեն տեսակի կենդանի շունչ:

— Կուզկա, տո՛ւր ինձ ֆոսգենի անոթը, — կանչեց Ստեփան Սերգեյեւիչը:

Կուզկան լավ ե ճանաչում այդ սոսկալի թունավոր գազը, վոր մրգի դուրեկան հոտ ուներ:

— Բա՛ց արա խողովակը: Թեքի՛ր անոթը, — հրամայում եր Ստեփան Սերգեյեւիչը, համարյա ուշադրութիւն չդարձնելով յերեխային:

— Ելի՛, ելի՛, — շտապում եր նա:

Կուզկան լսում ե հնազանդ:

Նա գազի խողովակը բաց եր թողել քլորի մեջ, և յերկու գազերը խառնվում եյին:

Հանկարծ Ստեփան Սերգեյեւիչի կանչը ցնցեց նրան.

— Սպասի՛ր, սպասի՛ր, այդ ի՞նչ ես անում:

Կուզկան գունատվեց:

— Ախր դու վոն թե ֆոսգեն ես բերել, այլ ուրիշ գազ, — ճշաց ջղային քիմիկոսը:

Կուզկայի լեզուն կապվել եր, նա կարմրեց՝ վոնց վոր ճակնդեղ: Իսկապես նրա բերածը ֆոսգեն չեր:


Նա ինքն ել տեսավ այդ:

Բայց սխալը ուղղել ուշ եր:

Ստեփան Սերգեյևիչը սաստիկ ջղայնացավ.

— Լաբորատորիայում պետք է աչքը լավ բաց անել, եստեղ հանաքներ չի կարելի անել: Ամեն մի սխալ կարող է վատ հետևանքներ ունենալ, — նկատեց քիմիկոսը խստութեամբ.

Յեվ մի կողմ թողնելով փշացած գազը, նա նորից սկսեց փորձը:



Ամոթահար՝ Կուզկան հեռացավ և սկսեց ամանները լվանալ՝ մեկ-մեկ աչքի տակով մտիկ տալով իր ուսուցչին:

Բայց Ստեփան Սերգեյևիչը յերևի ինչ վոր բան մտածեց:

Նա հանկարծ դուրս գնաց և վերադարձավ մի վանդակով, վորի մեջ պահված էր մի մուկ:

Նա հանեց մուկը, վորից մի թել կապելով՝ իջեցրեց ստացված գազի մեջ, վոր իր կարծիքով փշացել էր:

Կուզկան տեսավ, թե ինչպես մուկը գազի մեջ մի փոքր ցընցումից հեպո՝ իսկույն սատկեց:

Յերևի գազը ազդեց անմիջապես:

Կուզկան նկատեց, վոր ծերունի քիմիկոսի ճակատը աղոսվեց կնճիռներով:

Ծերունին մի քանի րոպե մտածում էր քարացած:

Հանկարծ նա անհանգստութեամբ սկսեց յերթնեկել:

— Լաբորանտ Միքայել, կանչիր այստեղ, — կանչեց նա:

Կուզկան նետվեց հրամանը կատարելու:

Յեկավ Միքայելը:

Ստեփան Սերգեյևիչը ինչ վոր բանի մասին յերկար ժամանակ փսփսում էր նրա հետ:

Յերկուսն էլ սաստիկ հուզված էին յերևում:

— Այսպիսի՛ արագ մահացո՛ւմ, — լսեց Կուզկան:

Յեվ քիմիկոսը լաբորանտի հետ միասին սկսեցին ինչ վոր բաներ անել Կուզկայի փշացրած գազի հետ:

Մի քանի անգամ յերկուսն էլ զարմացական ձայներ էին արձակում:

Լավում էին կցկտուր ձայներ. «ուղիղ հարաբերութիւն», «պատահական գյուտ»:

— Ես ի՞նչ եմ վնթիւնթում, — մտածեց Կուզկան:

— Տուն գնա, — ասաց նրան քիմիկոսը:

Թո՛ւնդ է չարացել, — մտածում էր Կուզկան ճանապարհին:

Բայց վորքան նա զարմացավ, յերբ հաջորդ որը Ստեփան Սերգեյևիչը դիմավորեց նրան ուրախ բացականչութեամբ:

— Դե՛, շնորհավորում եմ քո գյուտը: Դու գիտե՞ս ինչ արիւ՛:

— Ի՞նչ, — հարցրեց Կուզկան ապուշ կտրած:


— Քո շնորհիւ յես մի նոր հեղձուցիչ գազ գտա, այսինքն՝ մի նոր միացում, վորի դիմաց անդոր են բոլոր ընդդիմադիր գազերը, — բացականչեց քիմիկոսը ուրախ: Դու պատահաբար վերցրիր գազերի մի ուրիշ խառնուրդ, վորը ուրիշ բանի համար էյի պատ-

բաստել, իսկ հետևանքը այն յեղավ, վոր այդ գազի և քլորի նոր
խառնուրդը տվեց այն գազը, վոր հարկավոր էր:

Քիմիկոսը, չնայած իր յըջմտութեան՝ ուրախութեամբ համարյա
պարուն էր:

— Այժմ, Կո՛ւզկա, քո շնորհիվ՝ ՍիշՄ ունի մի այնպիսի գազ,
մի այնպիսի գորավոր զենք, վորի մասին վոչ վոք չգիտի,— ձայնը
բարձրացրեց քիմիկոսը,— սա մի կատարյալ ցնծութեան է:

Յե՛վ բռունցքը սեղմելով՝ ասաց:



— Դե հիմա՝ թշնամիները թող զգո շանան: Հեռո՛ւ մեզանից,
թե չե բոլորին կխեղզենք Կուզկայի գոլտով:

Յե՛վ դեռ յերկար ժամանակ, հոչակավոր քիմիկոսը աշխուժու-
թյամբ յերթևեկում էր լաբարատորիայում՝ մեկ գազը գովելով, մեկ
Կուզկային:

Այդ որը անցավ ուրախ:

Յերբ Կուզկան տուն յեկավ՝ ընթրեց և պառկեց անկողնում,
բայց որվա տպավորութեան տակ չեր կարողանում քնել:

— Թյո՛ւ, գլուխս արաքվում է:

X

Սա ի՞նչ բան է:

Կուզկան չորս կողմը նայեց, բայց չգարմացավ, թեև գարմանա-
յու պատճառ ունե՛ր:

Առաջին հերթին նա նկատեց, վոր իր սենյակում չի:

Այո՛, նա գտնվում է մի բաց դաշտում: Հեռվից յերևում է
անտառ:

Առաջից յերևում էին ինչ վոր մութ, նեղ գծեր, իսկ ինքը
Կուզկան գտնվում էր խրամատում, ուր դիրք էին մտել կար-
միր բանակայինները, վորոնցից ամեն մեկի գտակի վրա փայլում
էր կարմիր աստղը:

Թեև Կուզկային վոչ վոք բան չասաց, բայց նա իսկույն հաս-
կացավ, վոր ինքը գտնվում է պատերազմում. Հանրապետութեան
ների Միութեանը մենակ կուվում է ամբողջ աշխարհի կապիտալիստա-
կան յերկրների դեմ. բոլոր կողմերից ողակել են թշնամի բա-
նակները:

— Գնա՛նք, հիմա կսկսվի սոսկալի կոտորածը,— շնչաց մեկը
Կուզկայի ականջին:

Նա շուռ յեկավ:

Կանգնած էր Ստեփան Սերգեյևիչը՝ գունատ և հուզված:

— Գնանք,— կրկնեց նա բռնելով յերեխայի ձեռքը:

Յե՛վ նա շտապ քաշ տվեց Կուզկային մի անվտանգ տեղ:

— Հենց եստեղ, այս բետոնի շինութեան մեջ պահվում է մեր
ամբողջ գորութեանը,— ասաց Ստեփան Սերգեյևիչը՝ առաջնորդելով
յերեխային դեպի մի մեծ սենյակ:


Կուզկան մտիկ տվեց չորս կողմը:

Սենյակում գտնվում էին յերկու մեքենաներ, վորոնք ունեյին
անհաշիվ լծակներ ու անիվներ:

Մի հսկա սեղանի վրա տարածված էր նույնպիսի հսկա մի
հայելի: Այդ հայելին բաժանված էր քառակուսիների. ամեն մի
քառակուսին ուներ իր համարը: Այդ հայելու մեջ սաստիկ փոքրու-

թյամբ՝ յերևում եյին գյուղերի, շինութիւններն և ուրիշ արտա-
ցուումներ:

— Տե՛ս, —ասաց քիմիկոսը:— Այս հայելու մեջ արտացոլում է
յերկիրը՝ հիսուն հազար կիլոմետր տարածությամբ: Այս հայելու
մեջ յերևում է թշնամու ամբողջ թիկունքը՝ գյուղերը, աները, դիր-



քերը, ճանապարհները, և նույնիսկ մարդկանց խմբերը: Մենք կա-
րող ենք 7 միլ տարածության վրա տիրապետել թշնամու թիկունքը:

— Թշնամին պատրաստվում է հարձակում գործելու, — ձայն
տվեց մեկը զորասյունից:

— Թշնամու ուղային տորմիդը թռչում է դեպի վեցերորդ քա-
ռակուսին, — վրա բերեց մյուսը:

— Ճառագայթ, — հրամայեց քիմիկոսը, — պատրաստեցե՛ք գազի
անոթները: Ուշադրությո՛ւն:

Մեքենաներից մեկի մոտ վագեց մի կարմիր բանակային:

— Այդ մեքենան տաներկու միլ տարածության վրա ներգոր-
ծում է 1780 աստիճան ջերմությամբ: Նայի՛ր հեռագիտակով, —
հնչեց քիմիկոսի ձայնը կուզկայի ականջին:

Կուզկան մոտեցավ Ցեյսի խողովակին:

Ոգում, թռչունների յերամի նման, անագին բարձրության վրա
յերևում էր թշնամու տորմիդը:

Մեքենան շարժողության մեջ էր:

Կարմիր բանակայինը նշան դնելուց հետո, բաց թողեց ճա-
ռագայթը:

Յե՛վ հանկարծ՝ առաջապահ ողանավը բոցավառված ընկավ
գետին:

— Մեկը պատրաստ է: Հիմա մյուսը, — հնչեց ձայնը:

Թշնամու այերուպլանները իրար յետևից գլխակոնծի տալով
թափվում եյին գետին:

Սոսկալի ճառագայթը տեսնում էր իր գործը:

— Հարձակումը սկսվեց, — ձայն տվեց հայելին դիտողը:

Կուզկան մոտեցավ հայելուն և տեսավ մի շարք կետեր, վորոնք
շարժվում եյին մեկ ուղղությամբ:

— Կեցցե՛ Դորբոխիմը, — կանչեց Ստեփան Սերգեյևիչը. — գա-
զեր: Դարսեցե՛ք անոթները: Արձակե՛լ:

Հեռախոսները նույն ըոպեյին հաղորդեցին հրամանը բոլոր
գծերով:

Հայելու մեջ տեսնվում էր, թե ինչպես մեր դիրքերից
դեպի թշնամին էր ուղարկվում գազերի մի թավ ամպ:

Դա մի թունավոր սոսկալի գազ էր:

Ահա նա մոտեցավ հակառակորդի շարժերին:

Այժմ այն սև կետերը, վորքանք քիչ առաջ շարժվում էին՝
քարացան:

— Նրանք կոտորվում են,—ասաց Ստեփան Սերգեյևիչը:

Կուզկային սարսափը բռնեց:

Նա տեսավ մարդկային զարհուրելի, անխնա մի կոտորած:

Բայց մի նոր ձիչ նորից ցնցեց նրան:

— Գնացքը ուսմանը մոտենում է AC գծով՝ 12-րդ քա-
ռակուսուն, — ձայն տվեց կարմիր բանակայինը, վոր դիտում էր
հայելին:

Մեքենան սկսեց դրդալ: Կատարվում էր ինչ վոր զարհուրե-
լի բան:

Ողբ ալեկոծվում էր:

— Մագնիսական հոսանք,—մոմուս քիմիկոսը:

Կուզկան ազահուլթյամբ դիտում էր խողովակի միջով, ծերու-
նու ցույց տված ուղղությամբ:

Նա իսկույն նկատեց զնացքը:

Հանկարծ զնացքի հետ տեղի ունեցավ մի անսպասելի բան:

Կարծես թե նա ընդհարվեց մի կարծր, անդիմադրելի բանի հետ:

Մի բույն, և զնացքը գլորվում է ջախջախված:

Կուզկան ճչաց... և արթնացավ:

— Ա՛յ քեզ բան: Յերազ էր,— փնթփնթում էր նա աչքերը
տրորելով:

Յե՛վ իսկույն նա հիշեց Ստեփան Սերգեյևիչի խոսքերը:

— Ապագա պատերազմը կլինի սարսափելի: Մենք չենք պատ-
րաստվում հարձակում գործելու, բայց մենք պետք է՝ պատրաստ լի-
նենք ինքնապաշտպանության համար: Իսկ այդ կանի—Դոբրոխիմը:

* * *

Պատահանից ներս էին ընկել արևի շողերը:

— Վա՛յ, ուշ է արդեն,—մտածեց Կուզկան,—եսոր շատ եմ
քնել:

Չեր ուզում տեղիցը վեր կենալ:

Բայց հիշեց, վոր գործ ունի անելու:

Կուզկան վճռականությամբ դեն շարտեց վերմակը և վոտքի
յելավ:

Դուռը բաղխում էր տանտիկինը:

— Նամա՛կ ունեք,—լսվեց ձայնը դռան ձեղքից:

Յե՛վ կիսաբաց դռնից ներս ընկավ նամակը: Կուզկան իսկույն
ճանաչեց հոր ձեռագիրը:

Նա բացեց վարագույրը, պատռեց ծրարը և սկսեց ազահու-
լթյամբ կարդալ անից ուղարկած նամակը:

Սկզբում բարևներ էին գրած:

«Բարևում ենք Կուզկային, մեր սիրելուն».—և սկսվում էր ա-
նունների շարանը: Բարևում էր համարյա ամբողջ գյուղը:

Հետո հայրը գրում էր, վոր ծախել է հորթը, իսկ պառավ
ձին փոխել է և նորը առել:

Քեռի Պրոխորից գողերը տարել են յերկու քիլա պանիր ու
մի քիլա յուղ:

Նամակը վերջանում էր այսպես.

.....«Իսկ բոլոճներն ու բաղլինջները սաղ կոտորել ենք՝ վոնց
վոր դու էլիք շանց տվել: Հմի պրծել ենք դրանց ձեռիցը:
Ել քներս ոչ ով հարամ չի անում: Սաղ գեղը մեզանից
ա սովորել, գալիս են ինձանից խելք են հարցնում, յես
ել քո դայրի նրանց շանց եմ տալի, ու սաղ մտում են
զարմացած, թե եդ վոնց դու եդքան բան ես իմացել:
Հա՛, չմոռանամ ասել, վոր դռները փակելիս՝ մոռացել
ներսն էլիք թողել կատուն ու մի յերկու ձուռ,—դրանք
ել բոլոճների հետ սատկել են: Մերդ շատ էր սրանեղել
եդ բանի վրա, քեզ ել ուշունց էր տալի, ասում էր՝ քի-
միկոս»...

Հետո ելի սկսվում էին բարևներն ու մաղթանքները:

Կուզկան կարդաց նամակը և ժպտաց:

Նա իրեն հպարտ էր զգում:

Ճիշտ է, նա դեռ չեր կոտորել կապիտալիստների և հակա հե-
ղափոխականների բանակը, բայց բոլոճների և բաղլինջների հետ
հաշիվը մաքրել էր:

Գործի սկզբում՝ դա ել հերիք է:

Իսկ ի՞նչ կլինի հետո—այդ ցույց կտա ապագան:

ՄԱՆԿԱԿԱՆ

ՀՈՒՅՄ ԵՆ ՏԵՍԵԼ՝

1. Նե՛վե՛րՈՎ—Ի՛նչպե՛ս եյին ապրում տիկնիկները:
2. ՄԱՄԻՆ-ՍԻԲԻՐՅԱԿ—Արջի և մոծակի մասին:
3. ԿՈՒՊՐԻՆ—Յերկրի խորքերում:
4. ՈՐԼՈՎԵՑ—Ճամբորդություն այերուպլանով:
5. ՈՐԼՈՎԻՑ—Քիմիկոս-Կուզկան:
6. ԿՐԱՎՉԵՆԿՈ—Թե ինչպե՛ս Սաքոն կարմիր-բանակային դարձավ:
7. ՖՈՔՍ—Մինիստր մեկ ժամով:

ՏՊԱԳՐՎՈՒՄ ԵՆ՝

8. ԽԼԵՖՆԻԿՈՍ—Կարմրամորթները:
9. ՌԻԺԿՈՎ—Պատանի պիոները:
10. ԱՂԱՅԱՆ Դ.—Հեքիաթներ:



ԼԵՆԻՆՅԱՆ ԳՐԱԳԱՐԱՆ

Լույս են տեսել.

ԼԵՆԻՆ.—Պատգամներ յերիտասարդության.

ՍՈՑ-ԲԱՂԱԲԱԿԱՆ ՇԱՐԲ

Լույս են տեսել.

ՍՏԱՎԻՆ.—Գյուղացիական հարց.

Ն. ԵԼԻՉԱՐՈՎ.—Ի՛նչ վորոշեց կուսակց. XIV համագումարը:

ԿՂԱՐԱ ՅԵՏԿԻՆ.—(Կենսագրությունը).

ԳՅՈՒՂԱՅԻԱԿԱՆ ԳՐԱԳԱՐԱՆ

Լույս են տեսել.

ԼԻՎԻՆՍԿԻ.—Գյուղատնտեսական հարկ.

ՊՈՂՅԱՊՈՍԿԻ.—Ատոժու կամօր թե՛ գյուղատն. գիտությունը.

ՅԱԶՎԻՅԿԻ.—Մարդկային բնակարանի պատմությունը.

ՎԼԱՍՈՎ.—Հողի մշակումը յերաշտի ժամանակ.

ԳՄԻՏՐՅԵՎԱ.—Տգիտությունը և մնահավատությունը.

ԳՈՒԳՎԻՆ.—Փորոզ փայտից մինչև աղակտոր:

Լ. ԻՅՈՋԵՑՈՎԻՉ.—Գեղ կանգնի գերան կկտորի (կտայեր. մասին).

ԲՐԱՆՍԲՈՒՐԳ.—Ընտ. կենդանիների վար. հիվանդութ.

ՍԿՈՄՈՐՈՆՈՎ.—Լ-ին ոգնությունը հիվանդ կենդան.

ԿՐԱՎՉԵՆԿՈ.—Թե ինչպե՛ս կարելի յե գյուղում ելեքտրականու-

թյուն անցկացնել.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԳՐԱԳԱՐԱՆ

Լույս են տեսել.

ՍԵՄՇԿՈ.—Թորախտ.

ՍՊԵՐԱՆՍԿԻ.—Մոր այբբենարանը.

ԲՐՈՆՆԵՐ.—Վեներական ախտեր.

ԳԻՆՍԲՈՒՐԳ.—Յերեխ. վարակիչ հիվանդութ.

ԽՈՐՀՐԿԱՅԻՆ ԳՊՐՈՑԻ ԳՐԱՇԱՐԲ

Լույս են տեսել.

ԵՍԻՊՈՎ.—Գյուղացիությունը պահանջները և խորհրդ. դպրոցի

ծրագիրը:

ԿՐՈՒՊՍԿԱՅԱ.—Լենինի պատգ. ժող. լուս. մասին.

ՏՅՈՒՐՅԱԿՈՒՂՈՎ.—Ազգային հարցը և դպրոցը.

ԺԱՎՈՐՈՆԿՈՎ.—Հասարակագիտությունը I աստ. դպրոցում.

ԿՐԱՎՉԵՆԿՈ.—«Թե ինչպե՛ս Սաքոն կարմիր բանակային դարձավ»

(մանկ.-միջին և բարձր հաս.):



ՅՈՒԿՍ.—«Մինիստր մեկ ժամով» (մանկ.—միջ. և բարձր հաս., պատկերազարդ):

ՈՐԼՈՎԵՅ.—«Ճամբորդութունն այերոպլանով» (մանկակ., պատկերազարդ, միջ. հասակ):

ՄԱՄԻՆ-ՍԻՖԻՐՅԱԿ.—«Մոծակի և արջի մասին» (մանկ., պատկերազարդ):

ԿՈՒՊՐԻՆ.—«Յերկրի խորքերում», (մանկ., պատկերազարդ, միջ. և բարձր հասակ):

ՌՈՒԴԵՆ.—Պիտներ, պահպանիչ առողջութունդ.

ՈՐԼՈՎԵՅ.—Քիմիկոս Կուզկան. (մանկ., պատկերազարդ, միջ. և բարձր հասակ):

ՆԵՎԵՐՈՎ.—Ինչպես եյին ապրում տիկնիկները (մանկական, պատկերազարդ):

Բ Ե Լ Լ Ե Տ Ր Ի Ս Տ Ի Կ Ն

Հուլիս են տեսել

Մ. ԳՈՐԿԻ.—Պատկերներ.

Ա. ՍԵՐՍՅՈՒՄՈՎԻՉ.—Պատկերներ.

